



Հինգ բան, որ պետք է իմանալ Կալիֆոռնիա Նահանգի Վճարովի ընտանեկան արձակուրդի մասին

Դուք կարող եք ունենալ վեց շաբաթվա

աշխատավարձի մասնակի փոխհատուցում ստանալու իրավունք:

Կալիֆոռնիա Նահանգի Վճարովի ընտանեկան արձակուրդը (California Paid Family Leave, PFL) ամեն 12 ամսում աշխատողներին տրամադրում է մինչև վեց շաբաթվա աշխատավարձի մասնակի փոխհատուցման նպաստներ: PFL-ի ժամանակամիջոցը կարելի է տրոհել, և պարտադիր չէ ամբողջը միանգամից վերցնել:

Սա ձեր փողն է:

PFL նպաստների ֆինանսավորումը ստացվում է Կալիֆոռնիա Նահանգի հաշմանդամության պետական ապահովագրությունից՝ մի հարկ, որը մեզանից շատերն արդեն իսկ վճարում են (աշխատավարձի վճարման անդորրագրերի մեծ մասում նշվում է “CASDI”): Սա ձեր փողն է, այլ ոչ թե պետական դրամական հատկացում:

Դուք կարող եք ստանալ ձեր աշխատավարձի մոտավորապես 60-70 տոկոսը:

Դուք այդ իրավունքը կունենաք, եթե վերջին 5-18 ամիսների ընթացքում վճարել եք Կալիֆոռնիա Նահանգի հաշմանդամության պետական ապահովագրության հարկերը: Ձեր շաբաթական նպաստի գումարը գնահատելու համար այցելեք edd.ca.gov/PFL_Calculator կայքէջը:

Սա սուկ նորածնի հետ կապվածություն հաստատելու համար չէ:

PFL տրվում է նաև որդեգիր ծնողներին և հովանավորյալ խնամք իրականացնող ծնողներին: Հարկավոր է արձակուրդը վերցնել երեխայի՝ ընտանիքին միանալուց հետո 12 ամսվա ընթացքում: PFL-ից օգտվել կարող եք նաև ընտանիքի ծանր հիվանդ անդամին (ծանր հիվանդ երեխային, ծնողին, կնոջ կամ ամուսնու ծնողին, տատիկին կամ պապիկին, թոռանը, քրոջ կամ եղբորը, ամուսնուն կամ գրանցված քաղաքացիական զուգընկերոջը) խնամելու համար:

Դա արդարացնում է իրեն:

PFL հայցերը պետք է հիմնավորվեն փաստաթղթերով, և հայցերի մշակման համար կարող է մեկ-երկու շաբաթ պահանջվել: Վերցրեք այն ժամանակը, որն անհրաժեշտ է կարևոր պահերին տեղում լինելու համար:



CALIFORNIA
PAID FAMILY LEAVE
moments matter.

EDD Employment
Development
Department
State of California

Այցելեք CaliforniaPaidFamilyLeave.com՝
ավելին իմանալու համար:

EDD-ն հավասար հնարավորություններ ընձեռող գործատու-ծրագիր է: Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին: Ծառայությունների, օգնության և (կամ) այլընտրանքային ձևաչափերի վերաբերյալ հարցումները պետք է կատարվեն 1-866-490-8879 (ձայնային) համարով գանգահարելու միջոցով: TTY օգտագործողներին խնդրում ենք գանգահարել Կալիֆոռնիայի Կոմուտատորային ծառայության (California Relay Service) 711 համարով: